

**2007-2008 ուսումնական տարվա**  
**գիտական խորհրդի**  
**որոշումներ**

**07. 05. 2008թ. N 7 նիստ**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. ԵրՊԼՀ-ում մագիստրական ուղղությունների և մասնագիտացումների մասին /զեկ՝ Մ. Ավագյան/:
2. ԵրՊԼՀ-ի շրջանավարտի ավարտական որակավորման կարգի մասին /զեկ՝ Մ. Ավագյան/:
3. Հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրները և զարգացման հեռանկարային ծրագրերը /զեկ՝ Կ. Նալչաջյան/:
4. Մրցույթ դրոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:
5. Ընթացիկ հարցեր:

**1. Լսելով և քննարկելով** զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ում մագիստրական ուղղությունների և մասնագիտացումների մասին՝ գիտական խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

1. Հաստատել ԵրՊԼՀ-ում 2008-2009 ուս. տարում կրթական երկրորդ աստիճանում «լեզվաբանություն», «մանկավարժություն», «բանասիրություն» ուղղություններով և մասնագիտացումներով մագիստրատուրաների ստեղծումը և ընդունելության անցկացումը:
2. Հավանություն տալ ԵրՊԼՀ ամբիոնների կողմից մշակված լեզվաբանություն՝ տեսական կամ կիրառական լեզվաբանություն, լեզվաբանություն-տիպաբանություն, լեզվաբանություն-թարգմանություն, լեզվաբանություն-միջմշակութային հաղորդակցություն՝ եվրոպագիտություն, հոգեբանություն և PR, միջազգային լրագրություն լեզվաբանություն-միջմշակութային հաղորդակցություն, միջազգային հարաբերություն, մանկավարժություն՝ բուհական և բազմալեզու ուսուցիչ, բանասիրություն (լեզու և զրականություն), ինչպես նաև կրթության կառավարում (ՀՀ ԿԳՆ միջնորդությամբ) առարկայացանկերին:
3. Մագիստրոսական ծրագրերի իրականացման, կազմակերպչական աշխատանքների անցկացման, ուսումնական գործընթացի վերահսկման և որակի ապահովման նպատակով ստեղծել մագիստրատուրայի համար պատասխանատու ստորաբաժանում:
4. Հանձնարարել ԵրՊԼՀ ուսումնական մասին տասնօրյա ժամկետում առաջարկված կրթաբլոկները և առարկայացանկը վերածել կրեդիտավարկանիշային համակարգի պահանջներին համապատասխան ուսումնական պլանների:
5. Հանձնարարել շահագրգիռ ամբիոններին ստեղծել մագիստրոսական մասնագիտական ուղղություններին համապատասխան ԲԿ չափորոշիչներ և ուսումնական պլաններ, ուսումնական գործընթացի ուղեցույց-նկարագրեր և ներկայացնել ուսումնական մաս:
6. 2008 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին ստեղծել մագիստրոսական ծրագրերի որակի գնահատման և ինքնավերլուծության անկախ հանձնաժողով վերոնշյալ ծրագրերը ուսումնասիրելու նպատակով:
7. Հանձնարարել ուսումնական մասին և շահագրգիռ ամբիոններին պատրաստել գովազդային տեղեկատվական նյութեր հանրապետական մամուլում տեղադրելու նպատակով:
8. Հանձնարարել ԵրՊԼՀ համակարգչային կենտրոնին 15-օրյա ժամկետում համալսարանի վերկայքում ստեղծել համապատասխան էջ մագիստրատուրայի մասին:
9. Հանձնարարել ամբիոններին ԵրՊԼՀ-ի վարչատնտեսական գծով պրոռեկտորին ներկայացնել առաջարկություններ մագիստրոսական բաժնի համար հավանություն ստացած ծրագրերի և ուսումնական նյութերի հրատարակման, բազմացման անհրաժեշտ լսարանային պայմանների ստեղծման և մագիստրոսական ծրագրերի արդյունավետությանը նպաստող տեխնիկական միջոցների ներդրման նպատակով:
10. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ԵրՊԼՀ զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի վրա:

\*\*\*\*

**2. Լսելով** զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանին, որը ներկայացրեց ԵրՊԼՀ-ի շրջանավարտի ավարտական որակավորման կարգի նախագիծը՝ գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել «ԵրՊԼՀ-ի շրջանավարտի ավարտական որակավորման կարգը» և այն դնել գործողության մեջ / Կարգը կցվում է/:

\*\*\*\*

**3. Լսելով և քննարկելով** Հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Կ. Նալչաջյանի հաղորդումը հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարային ծրագրերի մասին՝ գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ամբիոնի կողմից ներկայացված ներքոնշյալ նախագիծն ընդունել որպես փաստաթուղթ, վերանայել խնդիրներն ու փաստաթղթերը և վերջնական քննարկումը տեղափոխել հաջորդ նիստ:

**Հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարային ծրագրերի մասին համալսարանի գիտխորհրդի որոշում**

Լսելով և քննարկելով հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Կ. Նալչաջյանի զեկուցումը ԵրՊԼՀ-ում հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարների մասին, ԵրՊԼՀ գիտխորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Արձանագրել ամբիոնի աշխատանքում դրական տեղաշարժերի առկայությունը:
2. Ի կատարումն համալսարանի Ռազմավարական ծրագրի և ելնելով հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնի ռազմավարական ծրագրի պահանջներից, ամբիոնն իրականացրել է աշխատանքներ, որոնց արդյունքում առաջխաղացում է արձանագրվել հետևյալ ուղղություններով.
  - 2.1. **Կրեդիտային համակարգի** ներդրման շրջանակներում մշակվել և գործողության մեջ են դրվել համապատասխան բակալավրական կրթական չափորոշիչներ, վերանայվել, լրամշակվել և ստեղծվել են պարտադիր և կամընտրական առարկայական նկարագրեր: Դասավանդվող գրեթե բոլոր առարկաների գծով մշակվել և ներդրվել են կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան, ուսանողների առաջադիմության ստուգման ու գնահատման հավաստի, չափելի մեթոդիկաներ:
  - 2.2. Ուսանողների հետ տարվող **անհատական աշխատանքների** շրջանակներում, դասավանդվող մի շարք առարկաների գծով մտցված է նոր՝ զեկուցումների և մասնագիտական գրականությունից կատարվող թարգմանությունների բաղադրիչը:
  - 2.3. Ամբիոնն աշխատանքներ է տանում գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ, ինչպես նաև համակարգում, մշակում և հրատարակման է ներկայացնում «Հասարակական գիտություններ. գիտական աշխատություններ» ամենամյա ժողովածուն:
  - 2.4. Ամբիոնի աշխատակիցների գիտական աշխատանքների արդյունքները հրատարակվում են ինչպես հանրապետական, այնպես էլ արտասահմանյան գիտական հանդեսներում ու ժողովածուներում, ամբիոնի գիտամանկավարժական կազմը պարբերաբար մասնակցում է միջազգային գիտական միջոցառումների:
  - 2.5. Ի կատարումն ԵրՊԼՀ Ռազմավարական ծրագրի 5-րդ բաժնի պահանջների և ամբիոնի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի թ. 5 կետի, ամբիոնը համաձայնություն է ձեռք բերել ֆրանսիական Fondation Ostad Elahi կազմակերպության հետ, որպեսզի CNRS-ի հետ համագործակցությամբ հրատարակության նախապատրաստվող էթիկայի և ընտանիքի հիմնախնդիրներին նվիրված ժողովածուում ընդգրկվեն ամբիոնի աշխատակիցների հետազոտական նյութերը:
3. **Ի կատարումն 23.05.2007 թ.-ի Գիտխորհրդի որոշման /թ. 7 նիստ/.**
  - 3.1. Ամբիոնը մշակել և իրականացնում է «Միջէթնիկական ընկալումների յուրահատկությունները ժամանակակից հայ հանրությանը» գիտահետազոտական ծրագիրը, որն ընդգրկված է ՀՀ ԿԳՆ թեմատիկ ֆինանսավորման ծրագրում:
  - 3.2. Ամբիոնը ներգրավված է Եվրոպայի Խորհրդի Լեզվական քաղաքականության բաժնի կողմից իրականացվող «Միջմշակութային շփումների ինքնակենսագրություն» ծրագրի մեջ:
  - 3.3. Ամբիոնում մշակվել և ներդրվել է մասնագիտական պրակտիկայի նոր, այլընտրանքային համակարգ՝ ուղղված հանրության տարիքային տարբեր խմբերում միջմշակութային շփումների փորձի ուսումնասիրությանը:
  - 3.4. Ամբիոնն իրականացնում է «Միջմշակութային հաղորդակցության հոգեբանություն», «Էթնիկական հոգեբանություն» առարկաների դասավանդումը:
  - 3.5. Ամբիոնում մշակվել է «Գլոբալացման մշակութաբանական և բարոյահոգեբանական հիմնահարցերը» ուսումնական ծրագիրը /առկա է առարկայական նկարագիրը/:
4. **Միջամբիոնային համագործակցություն**
  - 4.1. Ի կատարումն ԵրՊԼՀ Ռազմավարական ծրագրի Բաժին 1-ի 4-րդ կետի պահանջի, մշակվել է «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» մագիստրական ուղղության հոգեբանական և մշակութաբանական կրթաբլոկի երկու այլընտրանքային ծրագիր. մշակված են համապատասխան չափորոշիչները, ստեղծված են առարկայական նկարագրեր: Համալսարանի այլ ամբիոնների կողմից ներդրվող մագիստրական տարբեր ուղղությունների համար ամբիոնը մշակել է առարկայացանկ և համապատասխան առարկայական նկարագրեր:
  - 4.2. Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ համատեղ նախաձեռնված է «Մանկավարժական հոգեբանության» դասընթացի և համապատասխան ուսումնական ձեռնարկի ստեղծումը:

4.3. Կազմակերպվել են միջամբիոնային գիտական սեմինարներ հետևյալ թեմաներով. «Սիներգետիկան որպես հումանիտար գիտությունների նոր մեթոդաբանություն», «Մանկական օժտվածության հետազոտության սկզբունքները և եղանակները», «Պոստմոդեռնիզմի փիլիսոփայության որոշ առանձնահատկությունների մասին», «Հոգեբանական պատերազմ. սկզբունքները և մեթոդները»:

**5. Դրա հետ մեկտեղ կան մի շարք բացթողումներ.**

5.1. Դանդաղ է ընթանում ամբիոնի ինտերնետային կայքում դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների ներդրումը:

5.2. Ուսանողների հետ տարվող աշխատանքներում դեռևս լիարժեք կերպով չեն օգտագործվում ինտերնետային գրադարանային ռեսուրսների տված հնարավորությունները:

5.3. Դասավանդվող առարկաների գծով ուսումնական ձեռնարկների ստեղծման աշխատանքները բավարար չեն:

5.4. Ուսումնական գործընթացում դեռևս բավարար չափով չեն օգտագործվում նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

5.5. Դեռևս որևէ քայլ չի կատարվել ամբիոնի ռազմավարական ծրագրում 2008 թ.-ին նախատեսված հետազոտական ստորաբաժանման ստեղծման ուղղությամբ:

5.6. Դանդաղ է ընթանում նոր, որակյալ գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործընթացը:

**6. Ելնելով վերոնշյալ թերացումներից, հանձնարարել հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնին.**

6.1. Մինչև 2008/2009թթ. ուս. տարվա վերջը ավարտին հասցնել դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների մշակման գործընթացը և ամբիոնի ինտերնետային կայքում դրանց ներդրումը: Ուսանողների հետ աշխատանքում առավելագույնս օգտագործել ինտերնետային գրադարանային ռեսուրսները:

6.2. Մինչև 2008/2009թթ. ուս. տարվա վերջը ավարտին հասցնել «Անձի հոգեբանական տեսություններ» բուհական դասագիրքը և «Մանկավարժական հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը:

6.3. Միջոցներ ձեռնարկել նոր գիտամանկավարժական կադրերի պատրաստման խնդիրն ավելի գործնական հիմքերի վրա դնելու և ամբիոնը որակյալ կադրերով ապահովելու ուղղությամբ:

6.4. Ակտիվացնել և ընդլայնել միջամբիոնային համագործակցությունը հատկապես լեզվաբանության և հաղորդակցման տեսության, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև լեզվական ամբիոնների հետ՝ մշակել և ներդնել նոր առարկայական ծրագրեր, ավելի ամուր գործնական հիմքերի վրա դնել ուսանողների ջանքերով հասարակական գիտությունների ասպարեզում թարգմանական աշխատանքների իրականացումը:

6.5. Ելնելով ԵրՊԼՀ Ռազմավարական ծրագրի Բաժին 1-ի 4-րդ և ամբիոնի ռազմավարական ծրագրի 13-րդ կետերի պահանջից, ապահովել ԵրՊԼՀ-ում հոգեբանների պատրաստման շարունակականությունը և մինչև 2008 թ.-ի ավարտը «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» մագիստրական ուղղության հոգեբանական և մշակութաբանական կրթաբլոկի ստեղծման աշխատանքներն ավարտին հասցնել, ներկայացնել լիցենզավորման և դնել գործողության մեջ:

6.6. Ի կատարումն ամբիոնի ռազմավարական ծրագրի թ. 8 կետի պահանջների, ընդլայնել միջազգային մակարդակում ամբիոնի գործունեությունը՝ շարունակելով առկա նախաձեռնությունները և նոր հնարավորություններ որոնելով:

6.7. Մինչև 2008 թ.-ի ավարտը մշակել ամբիոնին կից հետազոտական ստորաբաժանման ստեղծման ծրագիրը, ի նպաստ գիտության և կրթության ինտեգրման գործընթացի՝ ակադեմիական համալսարանից հետազոտական բուհ դառնալու նպատակով /ԵրՊԼՀ Ռազմավարական ծրագիր, բաժին 4, կետ 8/:

*Սույն որոշման կատարումը դնել հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնի վրա, իսկ կատարման հսկողությունը՝ զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի վրա:*

Նախագիծը ներկայացրել է հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնը

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. ԵրՊԼՀ-ի 2007-2008 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին / զեկ. զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյան/:
2. Մագիստրատուրայի չափորոշիչների, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի հաստատում / զեկ. զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյան/:
3. Հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարային ծրագրերի մասին / զեկ.՝ ֆակուլտետների ղեկավարներ/:
4. Ընթացիկ հարցեր:

Քննարկելով գիտական խորհրդի օրակարգի հաստատման հարցը՝ գիտական խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

Գիտական խորհրդի օրակարգից հանել հոգեբանության և հասարակական գիտությունների դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարային ծրագրերի մասին հարցը:  
Քանի որ ներկայացված որոշման նախագիծը թերի է և բազմակողմանիորեն ուսումնասիրված չէ հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնի առջև դրված խնդիրների շրջանակը:

**1. Լսելով և քննարկելով** զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի 2007-2008 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

1. Ի գիտություն ընդունել զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ.Ավագյանի հաղորդումը 2007/2008 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին:
2. Արձանագրել 2007-2008 ուստարում 5-րդ ավարտական կուրսերի ուսանողների առաջադիմության նվազում անցած 2006-2007 ուստարվա 96,7% համեմատ այս տարի գրանցվել է 95,8 % առաջադիմություն, իսկ 4-րդ կուրսում 93,7 % առաջադիմություն,
3. Ամփոփելով ֆակուլտետների 4-րդ և 5-րդ կուրսերի պետական քննությունների արդյունքները և հիմնվելով պետական քննությունների մասնագիտական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վրա՝ 2007/2008 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքները համարել բավարար և արձանագրել հետևյալ դրական տեղաշարժը՝
  - 3.1 Դեկանատների կողմից քննությունների անցակացման բարձր կազմա կերպվածությունը
  - 3.2 ԵրՊԼՀ գիտխորհրդի 26.06. 2007 նիստի N 8 որոշման պահանջներին համապատասխան 4-րդ կուրսերի ավարտական քննությունների և թեզերի պաշտպանության պատշաճ կազմակերպումը
  - 3.3 մանկավարժություն և լեզուների դասավանդման մեթոդիկա առարկաներից արդի թեմաներով և ժամանակակից նոր տեխնոլոգիաներով կատարված դիպլոմային աշխատանքները և գերմաներեն մասնագիտությունից հայագիտության ամբիոնի հետ համատեղ գրված 2 զուգահեռական աշխատանքները
  - 3.4 պետական քննությունների հանձնաժողովներում, բացի հրավիրված նախագահներից, այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից, գերատեսչություններից և կազմակերպություններից անկախ մասնագետների ընդգրկումը
4. Սրա հետ մեկտեղ համալսարանի գիտ խորհուրդը արձանագրում է հետևյալ թերությունները
  - Համարել չկատարված ԵրՊԼՀ գիտխորհրդի 26.06. 2007 նիստի N 8-ի հետևյալ դրույթները
  - ռուս գրականության ամբիոնին ի ցույց դնել նախորդ որոշումների կատարման անհրաժեշտությունը, համարել անթույլատրելի միմիայն ձևական և մակերեսային փոփոխություններով սահմանափակվելը, արմատական ձևով վերանայել և օպտիմալացնել պետական քննական հարցաշարերը, գնահատման չափանիշ դարձնել ուսանողի նյութի մատուցման վերլուծական հմտությունները :
  - Լեզվական ամբիոններին գործնական առարկայական ծրագրերում ընդգրկել բազմալեզու և բազմամշակույթ հաղորդակցության բաղադրիչը:
  - անգլերենի հաղորդակցման (բառագիտություն և ոճաբանություն), ֆրանսերենի և գերմաներենի ամբիոններին վերանայել լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի քննական գործընթացի գրավոր քննության և մեկնաբանության ենթակա տեքստերում հաշվի առնել ֆակուլտետի մասնագիտացումների առանձնահատկությունները:
5. Ուսումնասիրելով Պետական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում տեղ գտած և շտկման ենթակա հետևյալ դիտարկումները գիտական խորհուրդը նշում է.

**Ուսաց լեզվի գրականության և օտար լեզուների ֆակուլտետում**

- Ուսերենի իմացության անկումը, խոսքի մշակույթի բացակայությունը, ինչպես նաև հաղորդակցական հմտությունների ցածր մակարդակը
- Թերացումը ռուսաց լեզվի տեսական հարցերի պատասխաններում
- Օտար լեզուների մի կողմից անգլերենի, մյուս կողմից իսպաներենի և գերմաներենի՝ քննական տոմսերի միջև եղած տարբերությունները:
- Պետական քննությունների քանակը, մասնավորապես չորս պետական քննությունների փաստը, ինչը նաև արդեն հակասում է ԿԳՆ-ի կողմից առաջարկվող կարգին:
- Մանկավարժություն և լեզուների դասավանդման մեթոդիկա առարկայից ցուցաբերած միջին մակարդակի գիտելիքները, ինչը 4-րդ կուրսում արտահայտվեց 11 անբավարար գնահատաներում և անհամեմատելի է երեք ամիս առաջ ամփոփած մանկավարժական պրակտիկայի արդյունքների հետ:
- 5-րդ կուրսի ռուս գրականությունից դիպլոմային աշխատանքների հանդեպ պետական քննական հանձնաժողովի ցուցաբերած ձևական, ոչ օբյեկտիվ վերաբերմունքը, ինչպես նաև առաջարկված դիպլոմային թեմաների ժամանակավրեպ կամ չափազանց «ծեծված» լինելու փաստը;

### Օտար լեզուների ֆակուլտետում

- բակալավրական թեզերում տեղ գտած բացթողումները/ թեմաների ոչ ճիշտ ձևակերպում, ներկայացման ձև և այլն/, հատկապես իտալական բաժնում
- անգլիական բաժնի 5-րդ կուրսի ուսանողների բանավոր քննության և նախաքննական գրավոր աշխատանքների արդյունքների միջև ակնհայտ տարբերությունները
- գերմաներեն մասնագիտության քննական հարցաշարում հարցերի կրկնությունը
- իտալական բաժնի 5-րդ կուրսի ուսանողների տեսական առարկաներից ոչ բարձր մակարդակի գիտելիքները
- իտալերենը 2-րդ օտար լեզու առարկայի գիտելիքների որակապես ցածր մակարդակը ի համադրություն մյուս 2-րդ լեզուների մակարդակի
- գերմաներենի 5-րդ կուրսի տոմսերի հարցերը չունեին նույն բարդության աստիճանը

Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետում օտար լեզուների պետական քննական հարցատոմսերի կառուցվածքում փոփոխություններ մտցնելու մասին.

- քննական հարցատոմսերի կազմման ընթացքում պահպանել հարցերի դժվարության համամասնությունը, դրանով իսկ ապահովելով ձեռք բերված գիտելիքների ստուգման օբյեկտիվությունը:
- Ելնելով ֆակուլտետի առանձնահատկություններից և հատուկ ուշադրության արժանացնելով անգլերեն լեզվով հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանն ու ստուգմանը, պետական քննության հարցատոմսում /որոշ բաժիններում, օրինակ՝ օտար լեզու և հոգեբանություն, օտար լեզու և միջազգային լրագրություն/ ներառել մեկ տեսական հարց, իսկ մյուսը փոխարինել յուրացրած մասնագիտական բառապաշարի /հաղորդակցման կարողությունների/ ստուգման այլ ձևով:
- 2007-2008 ուս. տարվա քաղաքագիտություն, երկրագիտություն, միջազգային լրագրություն և միջազգային տուրիզմ առարկաների պետական քննատոմսերը՝ համապատասխանաբար 4-րդ և 5-րդ կուրսերի ուսանողների համար եղել են նույնը, մնացած մասնագիտացումների քննություններում կրել են միայն քանակական փոփոխություն:
- Պետական քննությունների մասնագիտական և թե մասնագիտացման հարցաշարերում բացակայել է հաղորդակցման տարրը, հարցաշարերը չեն արտահայտել միջառարկայական քննության պահանջներին:

6. Ելնելով պետական քննական հանձնաժողովների նախագահների առաջարկություններից, ֆակուլտետային խորհրդներում նրանց հաշվետվություններից և ֆակուլտետային խորհրդների որոշումներից՝

### Հանձնարարել

6.1. Ուս և սլավոնական լեզվաբանության ամբիոնին շարունակել և ակտիվացնել 26.07.08 թիվ 8 գիտխորհրդի որոշումների կատարումը՝ գործնական դասընթացների ժամանակ (առավելապես՝ բանավոր խոսքի զարգացման դասերին) կիրառելով լեզուների դասավանդման ժամանակակից ձևերն ու մեթոդները և նպատակային ու արդյունավետ օգտագործելով գործնական դասընթացին հատկացված ժամաքանակը: Այդ նպատակով վերանայել ուսումնական դասընթացների բովանդակությունը, դասագրքերը և ուսումնական ձեռնարկները՝ սահմանելով ուսանողների մոտ համապատասխան լեզվական իրավասությունների ձևավորման հստակ ժամանակացույց:

6.2. ՌՕԼՖ-ում դասավանդվող օտար լեզուների համար պատասխանատու

ամբիոններին իրենց քննական պահանջները բերել միասնական տեսքի՝ հիմք ընդունելով անգլերենի որպես 2-րդ լեզվի ամբիոնի կողմից առաջադրվող քննական պահանջները:

6.3. ՌՕԼՖ-ի խորհրդում քննարկել և ներկայացնել համալսարանի խորհրդի հաստատմանը ֆակուլտետի մասնագիտական բակալավրական ծրագրով սովորող ուսանողների ավարտական որակավորման քննությունները՝ առաջիկա երկու տարվա համար սահմանելով 3 քննություն:

6.4. Մանկավարժության ամբիոնին «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության շրջանակներում լինել ավելի խստապահանջ մանկավարժական պրակտիկայի գնահատման հարցերում, հասնել ոսանողների գնահատման չափանիշների ավելի հստակ ձևավորման:

6.5. Գրականագիտության ամբիոնին՝ վերանայել ամբիոնում տարվող կադրային քաղաքականությունը և անհապաղ սկսել սերնդափոխության գործընթացը: Լուրջ քննարկման առարկա դարձնել 04.07.06 և 26.06.07 թիվ 8 գիտխորհուրդների որոշումների կատարման հարցում ակնհայտ թերացումները: Ապահովել գնահատման համակարգի համապատասխանությունը հաստատված չափորոշիչներին: Ավարտական թեզ գրողների և քննություն հանձնողների միջև անհավասարությունը բացառելու նպատակով՝ վերանայել քննական հարցաշարերը:

6.6. Անգլերենի հաղորդակցման, ֆրանսերենի և գերմաներենի ամբիոններին հորդորել ևս մեկ անգամ վերանայել լեզվաանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի ընթացիկ և քննական գործընթացի գրավոր/բանավոր քննության և մեկնաանության ենթակա տեքստերը հաշվի առնել ֆակուլտետի մասնագիտացումների առանձնահատկությունները: Վերանայել գրավոր և բանավոր խոսք զարգացնող առարկաների նկարագրերը և գիտելիքների գնահատման չափանիշները:

6.7. Յունեսկոյի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնին քննարկել 2007/2008 ուստարվա պետական քննության արդյունքների լույսի ներքո քննարկել ամբիոնի մասնագիտական առարկայացանկի ուսումնական ծրագրերի բովանդակային կողմը, ապահովել բակալավրիական բարձրագույն կրթական մասնագիտական չափորոշիչի պահանջներին համապատասխան միջառարկայական հարցաշարեր:

6.8. Անգլերենի հաղորդակցման, ֆրանսերենի և գերմաներենի լեզվական ամբիոններին, և հատկապես 2-րդ օտար լեզվի ամբիոնի իտալերենի բաժնին վերանայել տեսական առարկաների բովանդակությունը, հատուկ ուշադրություն դարձնել դրանց բովանդակային թարմացմանը՝ ներգրավելով ժամանակակից թեմաներ և մոտեցումներ, ինչպես նաև ավելացնել կամընտրական տեսագործական առարկաների քանակը, որոնց շնորհիվ ուսանողների գիտելիքները կլինեն ոչ թե սխոլաստիկ, այլ կնպաստեն նաև լեզվական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

6.9. Անգլերենի լեզվի, անգլերենի հաղորդակցման, ֆրանսերենի և գերմաներենի լեզվական ամբիոններին վերանայել ավարտական քննությունների հարցաշարերը, ապահովել ներ մասնագիտական տեսական առարկաների միջառարկայական կապ համապատասխանեցնելով դրանց բովանդակությունը և պահանջները, ինչպես նաև ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները համաեվրոպական լեզվական մակարդակներին, ապահովել պատասխանելիս ուսանողներին ինքնուրույն վերլուծելու և համադրելու հնարավորություն:

6.10. Ֆակուլտետների ղեկնատներին՝ առանձին ուսումնասիրման առարկա դարձնել ավարտական քննություններին ձախողված, բայց ուսումնառության ընթացքում բավարար և լավ գնահատականների արժանացած ուսանողների հարցը, ինչպես նաև գերազանցության դիպլոմների արժանացած բացառիկ քանակի հարցը:

7. Հանձնարարել ամբիոններին նիստերում քննարկման առարկա դարձնել պետական քննությունների արդյունքները, եզրակացություններն ու քննական հանձնաժողովների առաջարկությունները: Արդյունքները, ինչպես նաև առաջարկվող միջոցառումների պլանները ներկայացնել ուսումնական մաս:

8. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին և թողարկող ամբիոններին մինչև ս.թ. օգոստոսի 30-ը համատեղ քննարկել 2008/2009 ուս. տարվա քառամյա ուսուցման շրջանավարտների ավարտական թեզերի, ավարտական ամփոփիչ, ավարտական որակավորման քննությունների կազմակերպման ձևի, կրեդիտավարկանիշային կարգով գնահատման չափանիշների հարցը: Ուսումնական մաս ներկայացնել առաջարկությունները դրանք հետագա քննարկման և հաստատման նպատակով:

9. Ի կատարումն համալսարանի ռազմավարական ծրագրի աշխատանքներ ծավալել համալսարանի Կարիերայի կենտրոնի հետ համատեղ 2008/2009 ուստարվա ավարտական որակավորման քննական հանձնաժողովներում գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներ ընդգրկելու և շրջանավարտների մոտքը աշխատաշուկա ապահովելու ուղղությամբ:

10. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի թողարկող ամբիոնների վարիչների և համապատասխան ֆակուլտետների ղեկնների, իսկ հսկողությունը՝ Մ. Ավագյանի վրա:

**2. Լսելով և քննարկելով** զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը Մազիստրատուրայի չափորոշիչների, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ.Ավագյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ում մագիստրատուրայի ստեղծման ուղղությամբ 2007/2008 ուս. տարում կատարված աշխատանքների մասին:
2. Արձանագրել, որ 2007-2008 ուստարում համալսարանի գիտխորհուրդը և ռեկտորատը 7 անգամ անդրադարձել են մագիստրատուրայի խնդրին, ընդունել համապատասխան որոշումներ:
3. Քննարկելով համալսարանի զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի հաղորդումը գիտխորհուրդը նշում է, որ 26.06.07թ. Հ 8,06.02.08թ.Հ 5 և 07.05.08 թ. Հ 7 որոշումները ֆակուլտետային խորհրդների և շահագրգիռ ամբիոնների կողմից կատարվել են ժանկետային խախտումներով:
4. Հաստատել ԵրՊԼՀ մագիստրատուրայի 031100 «Լեզվաբանություն» ԲՄԿ-ի լեզվաբանություն-տիպաբանություն, լեզվաբանություն-թարգմանություն ուղղության, 031200 «Լեզվաբանություն-միջմշակութային հաղորդակցություն» ԲԿՄ-ի հոգեբանություն և PR, եվրոպագիտություն ուղղության, 031300, «Օտար լեզու գրականությամբ» 032400 «Ռուսաց լեզու և գրականություն» Բանասիրություն ուղղության, 031300, «Օտար լեզու գրականությամբ» 032400 «Ռուսաց լեզու և գրականություն» Մանկավարժություն ուղղության, 050000 «Հանրային կառավարում» մասնագիտության կրթության կառավարում ուղղության չափորոշիչները:
5. Հաստատել ԵրՊԼՀ մագիստրատուրայի 031100 «Լեզվաբանություն» ԲՄԿ-ի լեզվաբանություն-տիպաբանություն, լեզվաբանություն-թարգմանություն ուղղության, 031200«Լեզվաբանություն-միջմշակութային հաղորդակցություն» ԲԿՄ-ի հոգեբանություն և PR, եվրոպագիտություն ուղղության, 031300, «Օտար լեզու գրականությամբ» 032400 «Ռուսաց լեզու և գրականություն» Բանասիրություն ուղղության, 031300, «Օտար լեզու գրականությամբ» 032400 «Ռուսաց լեզու և գրականություն» Մանկավարժություն ուղղության, 050000 «Հանրային կառավարում» մասնագիտության կրթության կառավարում ուղղության ուսումնական պլանները:
6. Նշել ԲՄԿ չափորոշիչների և ուսումնական պլանների համապատասխանությունը կրթական նոր պահանջներին և եվրոպական չափանիշներին:
7. Համալսարանի գիտխորհրդի 07.05. 2008թ. N7 նիստի 3-րդ,4-րդ, 5-րդ և 8- րդ կետերը համարել դեռևս չկատարված՝ ընթացիկ և հանձնարարել շահագրգիռ ամբիոններին շտապ ձեռնամուխ լինել դրանց կատարմանը:
8. Նշել գրականագիտության, գերմաներեն լեզի, հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնների և կրթության կառավարման մագիստրոսական ծրագրերի առարկայական նկարագրերի փաթեթի անկատարությունը և հանձնարարել համապատասխան ամբիոններին մինչև ս/թ հուլիսի 10-ը շտկել այն:
9. Հանձնարարել ֆակուլտետային խորհրդներին, մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ամբիոններին մինչև ս/թ հուլիսի 15-ը քննարկել և հաստատել առարկայական նկարագրերը ֆակուլտետային խորհրդների և ամբիոնների նիստերում և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը :
10. Հանձնարարել գրականության /ռուս գրականություն/, գերմաներեն լեզվի, հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոններին շտապ միջոցներ ձեռնարկել ուսանողության շրջանակներում 2008/2009 ուստարում մագիստրոսական ուղղությունների գործունեությունը ապահովելու նպատակով :
11. Համալսարանի զարգացման գծով պրոռեկտորին, ուսումնական մասի վարիչին, մագիստրատուրայի համար պատասխանատու ստորաբաժանմանը մինչև ս/թ օգոստոսի 30-ը իրականացնել ուսանողների նեղ մասնագիտական ուղղությունների տրոհումը, կրեդիտավարկանիշային համակարգի պահանջներին համապատասխան անհատական



ուսումնական պլանների կազմումը, մագիստրոսների հետ համապատասխան պայմանագրերի կնքումը:

12. Հանձնարարել ԵրՊԼՀ-ի վարչատնտեսական գծով պրոռեկտորին հրատարակել և կամ պատճենահանել մագիստրոսական բաժնի համար հավանություն ստացած ծրագրերն ու ուսումնական նյութերը, ստեղծել անհրաժեշտ լսարանային պայմաններ և տալ մագիստրոսական ծրագրերի արդյունավետությանը նպաստող տեխնիկական միջոցների կիրառման առաջնահերթություն:
13. Մագիստրոսական ծրագրերի իրականացման, կազմակերպչական աշխատանքների անցկացման, ուսումնական գործընթացի վերահսկման և որակի ապահովման նպատակով ստեղծել մագիստրատուրայի համար պատասխանատու բաժին, հանձնարարել Ս.Ավագյանին ռեկտորատ ներկայացնել առաջարկություն բաժնի հաստիքացանկի և գործառույթների վերաբերյալ: